


ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշարից համար  
Տարեկան 12 ձր.  
Վեցամսեայ 6 »  
Բնասանական համար  
Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »  
Նվերիկայի համար  
Տարեկան 3 ձր.  
Վեցամսեայ 1.50 »  
Վե՛րիկի վճ. 14/10

Նախնական տարիքի ներսին համար 40 սանթիմ. հ. իսկ վերջին ներսին համար 20 սանթիմ. հ. ներսին առի սեղաններու համար 20 ժոզ կեղծ կրչայ :

Պաշարից համար ձեռքի  
( Գ Ի Դ 15 Ս Ս Դ Թ Ի Մ )



Նախկին և զրուս զրկեյ  
Խոլբուրնիսկուսի հո  
Redac  
R. P. Kalkmariam  
(Austria) Mechtaristangasse W. 4  
Yenna  
Redac  
edaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ  
Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Պրոսպեկտի և չնկ տրեխ  
Արտասանական համար ձեռքի  
( Գ Ի Դ 20 Ս Ս Դ Թ Ի Մ )

ԼՐԱԳՐԻ ԿԱՇԱՌԲ ԵՒ ՏՈՒԳԱՆՔ

Արտասանականում ապրող հայր թեան մէջ՝ սկսած անկիրթ գասակարգի մինչև կրթուած գասակարգը, մի զգուշի և անբարոյական սովորութիւն կայ. ընթերցողները լրագրին կամ կաշառք են խոստանում և կամ թէ տուգանքի են թարկոււմ :

Ի՞նչ է այդ կաշառքը. երեւակայեցէք, մէկը բաժանորդ է ուղում զրգիլ միայն այն պայմանով որ իր գրած յօդուածները տպագրվեն, իսկ իր մասին եղածները մերժվեն :

Իսկ լրագրի տուգանքը այս է. եթէ մէկը բաժանորդ է և թերթի մէջ նրա գէժ մի բան է գրվել իսկոյն հրատարվում է բաժանորդութիւնից առանց նոյնիսկ իր պարտք վճարելու :

Արդեօք ո՞վ է մեղաւոր, որ ընթերցող գասակարգը այսպիսի մի վատ գաղափար ունի լրագրութեան և նրա վարողների վրա : Տաճկաստանի մէջ նա սովորել է ամեն գործ, նոյնիսկ արդար գործ կաշառքով տեսնել, ու նրա աչքում հայ թերթերն էլ, հայ խմբագիրն էլ բարոյական նոյն աստիճանի վրա են գտնվում ինչ որ տաճիկ մի պաշտօնեայ :

Ու այդ գաղափարով նա գիտնել է մեր հայ խմբագիրներին և զժբախտաբար մեծ մասամբ կաշառել և վախցրել է :

Ընթերցող գասակարգի մի մասը թրքական բարքերով օժտված՝ բնականաբար դիմում է այդ ստոր միջոցին՝ մասուլը իր ձեռքում գործիք դարձնելու համար. բայց ի՞նչ ասենք այն մասուլին և նրա վարողներին, որոնք մի քանի ֆրանկի համար ծախում են իրենց խիզը՝ դաւաճանում բարոյական սկզբունքներին :

Մենք այդպիսիների ճակատին կը դրոշմենք վատ մակդիրը, որովհետեւ իրենց ցածութեամբ ոչ միայն արատաւորում են պաղա-

փարական մասուլը, այլև աւելի անբարոյականացնում ընթերցող գասակարգը՝ նրան քաջալերելով մի ամենաաղտոտ և ցած գործի մէջ :

ԳՐՈՇԱԿԻ ԽՆԴԻՐԸ

Խնդիրներ կան որոնք հեռու անձնականէ, հանրային կեանքի հետ կապ ունին. այս կարգի խնդիրներ հարկ անհրաժեշտ է որ իրենց իսկական ու ճշմարիտ գոյնովը ի յայտ գան : Ինչպէս մեր մի թղթակցութեամբ գրած ենք, հրատարակագիրներու ամենամեծ պարտքն է կարևոր և ժողովրդին կեանքին հետ կապ ունեցող ամէն խնդիրներ երեւան հանել այն ատեն, երբ արդէն իրենք ստուգած են ճշմարտութիւնը, որովհետեւ շատ անգամ սխալ ու սխալ լուրեր է կը ծնին հակառակութիւններ, կը դայթակղին մտքեր, որով խնդիր մը իր օրինաւորութեան սահմանին մէջ լուծուելէ աւելի կը կնճռատի և նոյնիսկ պատճառ կը գառնայ այլևայլ հակառակութեանց : Ահա այս կարգի խնդիրներէն է նաեւ դրոշակի խնդիրը, զոր հրատարակ նեւտելու ձանձրոյթն յանձն առած է «Իրաւունք» ասանց գիտնալու թէ ո՞վ է շինած զայն, ունի՞ 1200 ֆրանքի արժողութիւն, և կամ բանուած է սակի թելերով : Խնդրոյն մօտէն տեղեակ պարտք կը համարիմ ճշմարտութիւնը երեւան հանել՝ գայթակղելու մըտքերու հանդարտութեան և դրոշակի սակի մասերը կլլուղ ազգայնոցն անմեղութեանը համար :

Գրոշակը շինած է իր ազգասիրտ թեամբ, ծանօթ Տիար Խ. Ի. և ոչ թէ մէկ՝ այլ չորս հասարակեցի երեք իրենց նպատակին գործածուած ըլլալուն տեղեկութիւնք ժամանակին հարգուած են. վերջին չորրորդը սրտն համար է խնդիրը, ոչ սակի թելերով բանուած՝ և ոչ սակի խաչով, այլ հարիւր ֆրանքի արժողութիւն մը միայն ունէր. արժեքին քանակութիւնը խնդիր չէ, զի մէկ

սանդիմն ալ ազգին համար կորուստ է, և մենք կը ցաւինք այդ սրբազան աւանդին կորստեան վրայ եթէ երբէք իրաւ է. բայց ի՞նչ որ ճշմարտութիւն է և որ մօտէն տեղեակ ենք, դրոշակը տեղէն յանձնուած է մի հայաստանցի հայու, Ե. Տ. անուամբ, որ կերթար իր նպատակին իրագործման և որ յանձնած է զայն իր տեղը : Սակայն ի՞նչ թագուն նպատակաւ մը մէջտեղ կը նետուի դրոշակի խնդիրը՝ որ դոյութիւն չունի. անշուշտ գաղտնիք մըն է այդ զոր հրատարակողին կը պատկանի, բայց մենք այս ամենէն վերջ կը հարցնենք ի՞նչ պիտի ըլլայ հայութեան վիճակը . . .

Ամէն անգամ երբ տեղափոխութիւն մը կառնեմ կարգալու, չեմ գիտեր ի՞նչու սրտի բողբոս մը կուենեամ. հետաքրքրութիւնս կը շարժի, աչքս կը յառի թըլթակցութիւններուն վրայ և կը վախնամ թէ արդեօք կրկին պիտի հանդիպիմ յեղափոխութեան հակառակ հանրային մտքեր պրոպագանդայի խնդրոյ մը. և ահա շատ շանցի՛ր՝ առաջին անարկիս վախս կիրականանայ. ապրանքի խնդրէն վերջ դրոշակի խնդիր մըն է որ կը կարգամ իր էութեանը մէջ մեծցած խոշորցած, այնպէս որ ճանճուղտ մը եղած. ու արտաթեամբ կը մտածեմ թէ ի՞նչ պիտի ըլլայ հայութեան վիճակը. ամենուրեք հակառակութեան ետի և փութի բծախնդրութիւն և որ ստակալին է. խուլ ու անվերջ թշնամութիւն մը դէպ ի յեղափոխականները. է՛յ այնպէս է՞. յեղափոխութիւնը զօրացնելու, յեղափոխական կուսակցութեան մը ուժ տալու փութանակ, պէտք է քակել, պէտք է քանդել. ահա մեր ներքին կարգ մը հայ թափթփութեան գաղափարը : Գիտենք որ թուրք մեր իրաւունքը բռնաբարող թշնամին է, պիտենք որ մեծ մարդասպանը իր սակի գահը կորսնցնելու առաջին մտադրած է հայոցս արգարացի պոհանջներուն գոհացում չի տայ, բայց ի՞նչ շահ կարգ մը ցեցբու. հոս արժեքական մը

հոն արժեքական մը ( ) որոնք ինչպէս կերեւի ամէն ցածութիւն ի գործ կը դնեն յեղափոխութիւնը տապալելու. այն յեղափոխութիւնը որ ստրուկ ու դերթ ազգաց կարագիտն եղած՝ և որ հաղարատը հայ երիտասարդներու արիւնով մարտուած ու հիմնուած է. ի՞նչէն գիտնանք որ ապրանքի խնդիրը մատնութեան մը զոհը չէ նոյնիսկ Դաշնակցութեան հակառակ կարգ մը յեղափոխական կարծուածներէն. թէեւ այս կէտը մեղի մտ թէ, բայց տարակոյս չի կայ որ օր մը երեւան պիտի ելնէ անշուշտ թուրքի հետ վատ հայու մը մատն ալ :

Խաչագողներու հակառակ ենք և հոգով չափ կատենք ամէն տեղի որոնք յեղափոխական ծածկանուան տակ հայ ժողովրդէն դրամ շորթելու, և կամ ազգին պատկանած որ և է տանդը իւրացնելու համար չեն խնայեր և ոչ մի վատութիւն. որչափ որ ատենք իրենց արժանի պատիժը գտնան, սակայն և այնպէս ամբողջ հայ ժողովրդեան փափաքն է որ յեղափոխական ապարէզը մարտի այդպիսի աղտոտ արաւածներէ. վասն զի խաչագողներու, վատերու, մատնիչներու ազգին հասուցած փառանքն և ի՞նչ միթէ այդպիսիներու երեսնէն չէ՞ որ երիտասարդական թարմ ուժեր կորով մտքեր բանտերու ու աքսորանաց գատապարտուեցան. մենք կը հաւատանք որ այսպիսիներու հեռացումը, նոյնիսկ անհետացումը պիտի նպաստեն յեղափոխութեան յառաջ գիտութեանը որով հարթուած պիտի ըլլայ նաեւ ազատութեան ճամբան :

ՎԱԶԷ  
Իսլամիս, 10 Մարտ  
( )  
( ) Համբերութիւն և ոգտեւ զարգողներու խումբեր :

ԿԱՐՕՏՆԵՐՈՒՆ

Ամէն օր կը գանգատինք թէ՛ հարուստները անդուծ են հանդէպ ազգասիրին, թէ՛ իրենց փարթաւութեան ու զեղխութեան մէջ չեն դպար չքաւորներու ու անկարողներու վիճակին ծանրութիւնը, թէ իրենք իրենց մէջ սահմանափակուած չեն ուզեր եւ չեն անորժիր լսել ողորմուկ հացախնդիրներու ձայնը եւ սուրբութիւն անտարբերութեամբ կը վերաբերուին ազգային շարժումներուն:

Արդարեւ սա ճշմարտութիւն մըն է անուրանալի, բայց որո՞ւն է մեղքը. ջննենք զայն քիչ մը:

Հարուստ անգութներուն հետ կան նաեւ հարուստ ողորմածներ, որոնց գոյութիւնը բարեբախտաբար չենք կրնար ուշանալ եւ ի հարկին չենք զլացած նաեւ հրապարակապէս մեր գովեստներն եւ նրախաղաղութեան շնորհիւ: Բայց անգամ մը ուշադրութեան առնենք եւ անոնները թէ մեր անհատական զգացումներն ինչ եղած են հանդէպ այդ բարեւոյններուն:

Ահա ձեռքը ծալած եւ գլուխը ծածկ երկատարող մը՝ օր կեանքի պայքարին մէջ կերելի թէ չէ յաջողած կը դիմէ հարուստ ողորմածի մը գործապնդին եւ ցաւայի շնչաով մը նկարագրելէ վերջ վիճակին ծանրութիւնն ու անտանելիութիւնը, կը խնդրէ ճանապարհածախս մը ուրիշ երկիր մը երթալու համար, ուր կ'մացած է իւրոյ թէ գործ կայ, վստասակ կայ:

Ողորմածը՝ կը բանայ քսակը, կը նուիրէ, զուժար մը որ լիովին կը բաւէ անոր, եւ երկատարողը շնորհակալութեան մէկ քանի կցկատեր քսա թովովիւ վերջ կը գրպանէ այդ գումարը, բայց սեղէն չը շարժիր:

Ինչո՞ւ կը սպասես տակաւին, կը հարցունէ հարուստը, ուրիշ ըսելիք մըն քալ ունիս:

— Այո՛, էֆէնտի, ճանապարհին ուտեստի գրամ ալ չունիմ, այսքան գրամով ինչ կրնամ ընել ես, կը պատասխանէ:

Կարճ կապելու համար ուտեստի գումար մը քիչ կուտայ բաւականաչափ, բայց երկատարողը նորէն չը մեկնիր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՃՈՅ ԱՐԵՎԻՔԻ ԵՆ ՅԵՐԵՐ, ՊՍՏԵՐԱՉՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ ՅԵՂԵՓՈՒԹԻՒԹԵԱՆ ԵՐԱՏՈՒՄ

Փողովը մահաէրազրութիւնները առնելուն պէս, մին Պատրիարքարան իսկ միւսը Անգլիոյ գեապանին զրկեց. գալով Բ. Դրան՝ որոշեց Մշտյ դաշտի գիւղերէն մէկու մէջ բռնել սալ, այն նպատակաւ որ կատարութիւնն ալ կարգաւով տեղեկանայ թէ այլեւս Մշտյ գաւառի հայութիւնը իրենց բռնած ապօրէն ընթացքին դէմ չի պիտի լուէ, այլ միջոցներ ձեռք առնելով հակառակն պիտի գործէ մինչեւ վերջ. եւ այսպիսով Բ. Դրան մահաէրազրութիւնը Շէխան գիւղի բէյա Մկրտիչի ձեռամբ, Փողովով

— Հիմա՞կ ինչ կը սպասես, կը հարցունէ:

— Էֆէնտի, շնորհակալ եմ, ամմա... անցապի ծախք ալ չունիմ, կը պատասխանէ:

Անհաս մը ամէն բանէ առաջ իր ընտանիքին ապագայի ապահովութեանը կաշխատի եւ յետոյ իր գրացիին: Աշխատութեան թանկագին վայրկեաններու կորուստը եւ յաջորդաբար եղած խնդրանքները թէպէտ արդար զայսոյթով մը կը լսողներն զայն բայց հանդարտ պաղարիւնով մը:

— Է՛հ, անցապի ծախքն ալ ուրիշէ մը առ, կը պատասխանէ ողորմածը:

Խարխար կը վերցունէ երիտասարդը. եւ այս անգամ առանց շնորհակալութիւն յայտնելու չունչը կը առնէ հայկական սրճարանի մը մէջ եւ կսկսի եղածը պատմել ապուշներու արամարանութեամբ մը. թէ այսինչ հարուստը 30-40 ֆրանք ճամբու եւ ուտեստիս ծախքը հոգայէ վերջ, չէ ուղած նաեւ տալ անցապի համար 10-12 ֆրանք ծախքը եւ երախտապարտութիւնը՝ սպերախտութեան ձեւի սակ հետեւեալ եղրակացութեամբ կը յայտնէ.

— Ատնք ալ հարո՞ւստ են, հա՞յն: Ողորմածի անուն կը հանեն, բան մը պիտի ընեննէ ամբողջ չեն ընեն: Ահա մեր հայ հարուստները ասանկ են, ո՛չ սիրա ո՛չ զգացում կը կրեն:

Անց գտնուող ունեկնորները կը հետաքրքրուին այդ խնդրով. սո՞ւնք արդար իսկ ուրիշներ անարդար կը գտնեն ողորմածին վարմունքը, բայց ամենքը միահամուռ իրենց բաժնին կը ջանան օգտուել հարուստին ողորմութեան: Կէս ժամ վերջը ամենքը թղթախաղի սեղանի մը ընթացքի վրա հաւաքուած ու հայտնաբերուած միջոցաբար մը մէջ կը խաղան եւ գրպանէ գրպան կայցելեն գումարներ իրենց հետ բերելով ցընծութեան եւ անբութեան վայրկեաններ յաջորդաբար. այնպէս որ վերջի վերջոյ առնուած ողորմութիւնը զանազան գրպաններու մէջ կը փոխադրուի չեղելով նպատակէն:

Գանի մը օր վերջը ուրիշ մի երկատարող խնդրագիր կը մատուցանէ միեւնոյն հարուստ ողորմածին, որուն մէջ թուելէ վերջ տիրող ան-

գիւղ բէյա Ռըշոյին զրկուեցաւ. բէյա Ռըշոյ մահաէրազրութիւնը առնելուն պէս, սկսաւ տունէ տուն պտըտել ստորագրելու համար. Փողովով գիւղի մէջ ընտանիքով հաստատուած Մլաւան պէյի (սերունդէն, քանի մը առն պէյեր կը զբանուէին եւ այդ բանը իմանալուն պէս, Ապութ պէյ իր եղայրները եւ իր հօրեղբոր ազաքները հետն առնելով, բէյա Ռըշոյին գիւղի մէջ սեղ կը բռնէ) եւ [այդ մահաէրազրութիւնը ձեռքէն կ'առնէ], ու անմիջապէս ձեռքով Մուշ կ'իջնէ, առած մահաէրազրութիւնն միւթէսարեփին կը յանձնէ:

Միւթէսարեփը՝ մահաէրազրութիւնը ստանալուն պէս, կըր կը տեսնէ որ 55:8 հայ տուները մահաէրազրութիւնը կ'ընդունին՝ կ'իջ օրէնքի ճշգրտութիւնները չը գործադրուին, եւ այդ քակիչ եւ քանդիչ սպորտներով թիւները մէջտեղէն չը վերանան, մէկէն իրարանցում չը կատարական շրջանակներու մէջ առաջ կ'ուզայ, եւ շուտ ընդ փոյթ այդ մահաէրազրու-

թորութիւնը եւ գրգռանքը գաւառի թիւնը, կը խնդրէ «Ա սուժոյ սիրոյն» ուղարկել ստորագրողները մինչեւ չայսինչ կամ այսինչ երկիր, որոնք թուով քսանն աւելին են:

Մարդը ակնոցը կը չափէ. յօնքերը կը պոռակ, գրիչը ձեռք կ'առնէ ու հայր մը կընէ. առ նուազն մէն մի մարդու հարիւր ֆրանք հարկաւոր է. հետեւաբար քսան մարդը իրեն ուղած տեղը զրկելու համար 2000 ֆրանհրաժեշտ է:

Ամեն խնդրանք չափ ու սահման մը ունի: Մարդը՝ ընելիք զոհողութիւնը արդիւնաւոր եւ նպատակաշարժար չը գտնեն, եւ սուրբ քարի կամեցողութեամբն հանդերձ անտարակոյս մի քանի առաքելութիւններ ընելէ վերջը կը պարտաւորի քաղցրութեամբ մեղքիլ ինքզնին:

Երկատարողը ձեռնուռայն կը վերադառնայ սրճարան: Ամենքը կը խոսուին անոր բուրբաբքը, Հետաքրքիր են, կուզեն հասկնալ ինչ եղաւ:

— Յոյս չիկայ, մերժեց պատասխանը կը ստանան:

Սրտերը գտնուութեամբ կը լեցուին: Ատնք որ առատօրէն վաւերկամ ասանկին խաղաժողութեամբ վրնեմոյութեամբ վատնած են իրենց ճակատներու արիւնքամ քրտինքներուն շնորհիւ ձեռք բերած վարձքը, ամենէն ասիլի կը նախատեն խեղճ հարուստը, որուն միակ յանցանքն է ողորմածութիւնը եւ անոր հետ ամբողջ հայութիւնը կը դատապարտեն:

— Մեր ազգին մէջ մարդ չիկայ, հայ չիկայ, ասանկ հայութիւն կը լլաւ, ասանկ ողորմածութիւն կը լլաւ: Անոթի մեռնելու ալ լլաւ, հոգ ու խնամք ասանկ չիկայ:

Եւ կսկսին ուտանք ինքզնին զհար նետել, ուրիշներ ծովը եւ մաս մը ալ անոնցմէ սէպ ու ապտաթուալունէ մը վար մինչեւ որ ժամանակը իր հետ մտացուածը բերէ եւ անորորութիւնը վերստին արիւն անոնց շարքերուն մէջ:

ՄԵՂՈՒ

(Մնացածը յարստող)

Թիւնը Պիթիւս Արիֆ փաշային կը զրկեն. այն եւս՝ այդ մահաէրազրութեան պատճէնն առնելով, մահաէրազրութիւնը չիտակ Բ. Դուսը կը զրկէ. եւ առած պատճէնով սկսաւ խտաիւ քննուել իրենց կատարելութուն հեղինակները գտնելու համար. ստորագրողներէն շատերը քանտար կուեցան շարքերով, բայց անկարելի եղաւ հեղինակներն գտնել:

Մահաէրազրութիւնը Բ. Դուսը հասնելով, առանց վարանման Պիթիւսի կատարութեան հետաքրքի խտաիւ պատուիրելով թէ՛ չըլլայ որ այդ աստի սխալ քալլ մը ասնուի մահաէրազրութեան զրկուի չարիքի ներքեւ խարքախուած մահաէրազրութեան մը կառքերութիւն տալով, պաշտօնական գործողութիւններու ձեռնարկուին, այլ խոսեմ ու ճիգութեամբ անտարակոյս ընէ հեղինակներն գտնել, եւ ինդիրը սեղն ու սեղն գոցել, որ չըլլայ թէ՛ ծաւալ առնելով բարձր շրջանակներու մէջ խնդրելու իրենց դէմ գծուարութիւններ յարուցանելով:

ՃԷՊՐԱՅԻԼ ՖԵՆԷԿԱՆ

Ճէպրայիլ Թրէնկեան, մին այն մեծ դէմքերէն որոնց վրայ դեռ կը մնայ կանգուն Ռուսներու Հայութիւնը, յանկարծական մահով մը, ամսոյս 10ին, խոր սուգի մէջ թողուց ամբողջ Քօնսթանպուլի հայերը եւ Թրէնկեան գերդաստանը:

Այսպիսի անհասանբուր կորուստին մեծութիւնը այն ասանկ մահաւանդ կը շեշտուի հասարակութեան կամ քաղաքի մէջ, երբ անոր յաջորդող մը իրականապէս գծուար կը լլալ գտնել:

Ան ճիպրայիլ Թրէնկեան եղական էր արդարեւ քաղաքիս բուրբ ազգայնոց մէջ, իր ամեն անսակ բարեմասնութիւններով:

Ինիկ կեսաւրացի էր հանդուցեալը, 1848ին ծնած, ու տղայ հասակին մէջ Պոլիս բերում: Դրան երկու տարիներ առաջ իր առեւտրական ապարէզը ընդլայնելու համար, Քօնսթանպուլէն հաստատում էր:

Քօնսթանպուլի ազգայինները, այն ատեն սակաւաթիւ չունենալով ո՛չ եկեղեցի եւ ո՛չ վարժարան Ճէպրայիլ Թրէնկեան կը լլալ ամենէն մեծ պարագլուխը ազգայնութիւնը ընտրող այս երկու հաստատութիւնները հիմնարկելու. եւ կ'իրականացնէ զանոնք բարոյական ու նիւթական ամենամեծ ստորագրութիւն մին լլալով ինք:

Իր առեւտրական ապարէզին մէջ օրէ օր ունեցած յաջողութիւնը, որ վրնքը քաղաքիս մէջ նիւթական բարձրագոյն կարողութեանը հասուցած է, իր զույլած յարգանքն ու պատիւը ամէն ազգերէն ու վերջապէս ուռմէն կարավարութեան իր կուրծքը զարդարած պատուանշանը, երբէք հպարտութիւն մը չի տուի իր ազնիւ բնաւորութեան, որ մնաց միշտ օգնող մը

Այդ խնդրոյ մասին Պիթիւսի կուսակալութիւնն ու Բ. Դուսը բանակցութեանց մէջ էին շարունակ հեռագիրներ փոխանակելով. անմիջապէս Պատրիարքարանի կողմէն ալ ազգուձեռով բողոքագիր մը Բ. Դրան կը արուի, եւ բացատրութիւն կը պահանջուի թէ ինչո՞ւ համար Մշտյ գաւառը 55:8 տուն մահաէրազրութիւնը կը զրկուին. միւս կողմէն ալ Անգլիոյ գեապանը խտաիւ կը բողոքէ եւ միանպամայն բացատրութիւն կը պահանջէ:

Բ. Դուսը անսեղով որ հետզհետէ կը դժւարանայ խնդիրը, այդ պատասխանատուութիւնը թեթեւեղութեամբ, մի միայն Պիթիւսի եւ Մշտյ հայոց կողմէն մէյմէկ շնորհակալութեան ուղերձ զրկել եւ հայոց կողմէ կը զոհողներուն գոհացում մը տալ առաջարկեց Պիթիւսի կուսակալին:

Պիթիւս, վերէն ստացած հրահանգներն ստնելով, անմիջական ձեռով գործադրութիւն ձեռք առաւ. Մշտյ կատարութեան միջոցաւ, հայոց

աշխատող մը աղքատին, եկեղեցւոյն, վարժարանին ու ազգին: Քաղաքին հայութեան այս վերածնութեան թուականին մէջ որ սկսած է ազգային նորակերտ հոյակապ վարժարանին կառուցումովը, նախկին և բարոյական կան ամենամեծ ստատոյցներէն մին եղած է ձեւորայիլ Պրէնկեանն ու իր ամբողջ գերզատանը:

Հանգուցելոյն սղարացեալ եղբայրն էր որ դեռ երկու տարի առաջ 5000 ֆրանք կտակած էր վարժարանի շինութեան:

Ձեւորայիլ Պրէնկեանի թաղումը խիստ շքեղ եղաւ, նմանը չի տեսնուած Փոնթանցայի մէջ յոյզարկատրութեան մասնակցեցաւ գրեթէ ամբողջ Փոնթանցաքաղաքը: Եկեղեցւոյ մէջ իր զազազին վրայ գամբանականներ խօսուեցան հայերէն և սուրբաբանութիւն լեզուներով: Քաղաքապետական մեծ շէնքը սեւ գրօշակ պարզած էր ի նշան սոյոյ: սեւ գրօշակներ կը ծածանէին նաեւ փողոցներուն և շուկաներուն մէջ: Զինուորական պատիւ ընծայուեցաւ ննջեալին, ու զինուորական նուագաձու խումբը ուսմէն զպրայց դատուն հետ մասնակցեցաւ մեր թաղման արարողութեանց:

Այն բազմաթիւ ծաղկեփունջներուն մէջ, որոնք նուիրուած էին հանգուցելոյն բազմաթիւ բարեկամներէն և սիրելիներէն, մասնաւորապէս աչքի կը զարնէր Փոնթանցայի «քաղաքապետութեան» և մանաւանդ «հայ հասարակութեան» ծաղկեփունջը, որ այնքան բարձր բռնած էր իր սով պատիւը ամբողջ Փոնթանցայի հայութեան:

Ու այս շքեղ թափօրը անբաժան յառաջանալով մինչեւ գերեզման ցոյց տուաւ այն ճշմարիտ սէրը և համակրանքը, զոր ազգը գիտէ ընծայել իր անուներ

և համարը բարձր բռնող արժանուոր մէկ զաւակին: Աղբարացեալ ձեւորայիլ Պրէնկեանն այժմ սուղի մէջ կը թողութիւր ամուսինը, այրի տիկինն և զուգար, իր երկու զուակները Տեարք Յարութիւն և Մկրտիչ, իր եղբայրը Տիար Միսաք Պրէնկեանները և ամբողջ իր գերզատանը:

Մեր խորին վշտակցութիւնը ամբողջ Պրէնկեան գերզատանին:

Ղ. ԿՈՅՆԿԵԱՆ

ՅԱՆՑԱՆՔԸ

Որո՞ւ է յանցանքը, երբ այցելու հովիւի մը լաց նամակ կը գլուխ եկեղեցական ճիշդ կամ սխալ խնդրոյ մը ատթիւն ու ինքը փոխանակ եղելով թիւնը պարզելու, մտքերը հանդարտեցնելու և կամ յանցաւորը պատժելու կեղծ իր մէկ ստորագրուած ժիշտաւ հրապարակաւ յայտարարելով թէ «պատասխանելը բացարձակապէս սակարգ կը սեպէ» ու այսպէս ենթադրութիւնները կը շատնան, կ'իրքերը կը սրտին և հակառակութիւնները կը ճշգրտորուն:

Արդեօք ինչո՞ւ միեւնոյն անձը աւելորդ չի սեպել իր անձնական շահուն համար աստ անդ լուրեր և մտարցիկ նամակներ խրկելն ալ:

Ի՞նչ բանի համար եկած է այցելու հովիւը, թէ՛ ոչ բարդ խնդիրներ կարգադրելու և ժողովուրդին մէջ սէր ու համեմատութիւն գնելու իր խրատներովը, միջամ. ու թիւններովը և... հոգեշունչ քարոզներովը:

Որո՞ւ է յանցանքը երբ տէրտէր մը հրապարակաւ կը յայտարարէ թէ ինքը գիտէ իր պաշտօնին կիրառումը եկեղեցւոյ կանոնաց և մտքդիւթեան օրինակները:

նաց համեմատ ու կը յօտարայ թէ մինչեւ յարգ շրջահայեաց պաշտօնավարութիւն մը ունեցած է երբ անկից առաջ մասնաւորներու տան մէջ կամ զանազան անձերու մօտ իր փաղաքշիջ խօսքերովը և անուշ լեզուի բառերովը քծնողի մը զգուշի ազդեցութիւնը կը ներգործէ ու ակնարկուած խնդրոյն համար կըսէ «նորընծայութեանս տուէք, անփորձութեանս տուէք...»:

Հիմա ո՞վ հապճեպած եղաւ հրապարակ իջնելու, ե՞ս թէ ինքը երբ նորընծայ և անփորձ ըլլալը գիտէր:

Գարձեալ որո՞ւ է յանցանքը երբ թաղային խորհուրդ մը յաւակնու թիւնը կ'ունենայ կարծելու որ ինքը խղճմտօրէն ազգին շահերը պաշտպանելու ընթացքին մէջն է անհեթեթ և աւելորդ պաշտանդումներ ընելով ննջեցեալներու պարագաներն որոնք գործուած սխալը գիտել տալերնուն համար կը նախատուն և կը գատապարտուն, ուրկէց անհամաձայնութիւն մըն է կը ծագի և անհաքաղաքի եկեղեցին ու վարժարանը կը տուժն:

Որո՞ւ է կրկին յանցանքը երբ յրգուածագիր մը, խնդիրը թուի թէ կիրառելի ուսումնասիրած, կը կարծէ թէ վարժարանին նուէր մը տալու կարող ընտանիք մը բարեհաճութիւն մը չէ ունեցած կամ անձնական հաշիւներէ թելադրուած մերժած է իր լուսնի ազգային ուսումնասիրանին:

Ինչո՞ւ սակայն, ի՞նչ պատճառաւ մերժած է ինքն ոչ նախատինքներու տարաքի մը գլխերնուն ստանալուն համար:

Թաղական խորհուրդ մը ի՞նչ պէտք է ընէ ազգին հաստատութիւններուն հասոյթները աւելցունելու համար: Նախատինքը, սպասելալի՞ք:

Ահա ինչ որ եղաւ յիշեալ ընտանիքին համար ալ, որոնք ցա-

ւեցան Պառնայի եկեղեցւոյ և վարժարանին եղած զրկանքին համար, սակայն սուրին ազգային ուրիշ հաստատութիւններուն ինչ որ որոշած էին տալ:

Եթէ յարգելի յօդուածագիրը չի համոզուիր այսքան շագատութիւններէն և մանրամասնութիւններու կը կարօտի գիտնալու համար թէ ինչո՞ւ խնդիրը այս աննպաստ հանդամանքը ստացաւ և ի՞նչ պատճառներ կային որ տեղի տուին այնքան ցաւալի դէպքերուն, ես պատրաստ եմ իրեն նորամագրելի ընել ամբողջ գիտցածս և թաղային խորհրդոյ հետ ունեցած թղթակցութիւնս, որոնք առ այժմ հրատարակուելու պէտքը չունին, լոկ ազնուութեան մը ապացոյցը տուած ըլլալու համար:

Յ. Ա. ՓԱՓԱԶԵԱՆ

ՕՃԱՆԴԱԿ ԽՄԲԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻՆ

«Շարժում»-ի 205 թուին մէջ Պ. Նախ ըսած է իք թէ որ իշի ձեռք գործիք եղած եմ. ես անուսրայ կամքէ անկախ ըլլալու հակաակորդներս իսկ կը վկայեն, բնաւ մինչեւ հիմա ոչ մարդու գործիքեղած եմ և ոչ ալ կըլլամ. յետոյ կըսէք թէ Շ. Կամարակներ հակառակ մեր կարծածին ինձմէ շատ և շատ բարձր մէկն է. մենք ո՞ր և ե՞րբ ըսինք ցած է և կամ ուղէտ է. մենք միայն ըսինք և գարձեալ կըսենք թէ Մ. Գ. Ա. ի անցեալ գործունէութիւնը մերկապարանոց ընելը իր ներկայ գիրքին և ամբողջ ընտանեացը հակառակ է, որ այսօր բունութեան ճիրաններու տակ է. դուք այսօր փոխանակ Կաթիլի որսորդ Աւօն, Մարօն, Կարօն, Ասլանը եայլն, Շ. Կամարականի շինած բռնութեան տակ սուս ու բուտ պատմութեանը հետ և ինձ ալ Շ. Կամարականի հետ բազատատութեան գնելու քեզ և

առաջնորդարանին տեղեկութիւն տըրուեցաւ թէ, առանց ուշանալու գործով մը կ'ազմելով պատգամաւորութիւն մը ընտրէ, Պիթիւն երթալու հայրց ցաւերն տեղեկացնելու և թեթեւացումն ստանալու:

Մշտ կառավարութեան տուած հրահանգի համաձայն առաջնորդարանը խառն ժողով մը կ'ազմելով, և այդ ժողովին բացատրիկ կերպարանք տալով, զաշխի շատ մը գիւղերէն երեւելի հայերն ևս հրաւիրեցին. զործուած ապօրինութեանց մասին երկու երեք օր խորհրդակցելէ յետոյ, տեղեկագիր մը պատրաստելով, հինգ անձէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը կ'ազմեցին Պիթիւն երթալու ժողովրդան ցաւոց թեթեւացում մը առաջ բերելու, և խառն ժողովոյ կողմէ տուած տեղեկագրի համաձայն բանակցութեան մէջ մտնելու համար:

Տեղեկագրութեան մէջ հինգ գըլխաւոր կ'որոշուի չի ճիշդութեամբ գէմբողբուած էր, որք ևն՝ Ա. հարկահաւաքութեան համար, սէր-թան

սիրտներնուս կ'որոշանարար և քանգիւ ընթացքին գէմ շափ ու սահման մը որոշել. Բ. միւլթիլիմներու բրած լրբութեանց ու բացարձակապէս կողպուաներուն վերջ մը տալ, այլևս գիւղերու ծախսովը վերջացնելով այն հիման վրայ որ կ'առավարութիւնը իր օր շուտ ստատորոգը ձանձնայ, և գիւղ անունը գիւղին ձգելով. Գ. նոր և անունն իսկ չի լսուած 1 1 տեսակ տրոյ ջնջումը միւլթիլիմայն. Դ. բոս օրինական զօրձողութեանց, քուէի տաւելութեան համաձայն հայ պաշտօնեաներն պաշտօնի կ'աւել. Ե. զառաքաններու մէջ հայրցս կողմանէ կ'առաջ լողբի ձայնը լսել առաջ:

Օր առաջ գիւղի թշուառութիւնն առաջնորդոց նախորդ հինգ գլխաւոր կէտերու վրայ, խառն ժողովը պատգամաւորներուն մանրամասնօրէն հրահանգ տալէն յետոյ, ձանադարձ գրաւ: Պիթիւն հասնելուն պէս, Արիֆ փաղային ներկայացան հայրցս կողմանէ եղած յորդաններու ու արբատուններու մասին պատրաստուած տեղեկագրին իրեն յանձնելու:

Արիֆ փաղային, քանի ամիս առաջ իր հայրիկն ծրարի առանց ու և է դժուարութեանց հանդիպելու նոյնութեամբ իրազործութիւն տեսնելով, կը հրճուէր ու կ'աւարտանար. այն պէս սղեւորութեան մը մէջ էր, որ կը կարծէր թէ քանի մը տարիներէ յետոյ, Մշտ աշխարհի ժողովուրդը, վերջին ծայր թշուառութեան և նեթարկուելով, անոպայման կամ պիտի գաղթէր կամ պիտի ձուլուէր. միմիայն իրենց գոյութեան պահպանման միջոցը ընտրելով, երբէք մարքն իսկ չէր անցունէր որ այնպիսի դժուարութիւններու պիտի հանդիպէր, որ մէջէն և կըլը իրեն համար շատ գրծուար պիտի ըլլայ. իր քանդիչ ձեռնարկներու յաջողութեանէն յափշտակուած, ամէն ինչ եղած վերջացած կը կարծէր, իսկ միւս կողմէն հայերն երկար խորհելէ ու խորհրդակցելէ յետոյ մահմէտականութիւնն բառ մը մէջտեղ գըլրուելով, այնպիսի անբաժնելի հարուած մը տուին Արիֆ փաղային, որ ամբողջ իր քակիչ ու քանդիչ ծրարութեաներն յեղաշրջեց,

երբեմն քանի մը դաւաճաններու ձեռամբ հայ ժողովրդեան մէջ երկպառակութեան սերմերը սերմանել տալով, որ կարելի չըլլայ միւլթիւն կապ մը դուրս գալ այժմ գըլուելու հայ ժողովրդեան հետ բանակցութեան մտնել պատճառապէս կ'առաջարկէ. և այդ առաջարկուածի հիման վրայ, հայերը առաջնորդարանի միջոցաւ, պատգամաւորներ ընտրելով, տեղեկագրութեամբ մէկտեղ զըրկեցին փաղային տեղեկագիրը պատգամաւորներէն առնելով, թրքական խորամանկութեամբ մը մէկ երկու շարտիներ տաւրիւթիւններ զոգբարբերել ու քաջքնել յետոյ կը համաձայնի հինգ առաջարկուած պայմանները ընդունել. և նոյն օրէն իսկ յստատանալով գործադրել տալն և ևս այսպէս քիչ շատ հայրց կողմէ եղած բողբներուն տեղի տալով մահմէտականութեան հարցը գոցեց:

ՄԱԿԱՐ ՅՈՎՀՍԵՆԿԵԱՆ

(Շարունակելի)

անիկայ իրարու հետ բազմաթիւ թեան գիր :

Յետոյ ըսած էք թէ ձեր և ձեր մէկերկու արժանաւոր ընկերներու ինթրիքներու զո՞հ գացիք . և թէ ես և ընկերներս ինթրիքներ ըլլայինք կարծեմ մեր անհատական գործերուն մէջ այնչափ կարեւոր պէտք չէր զգացուէր որ երեք անգամ մէջմէկ կոկիկ գումար հանգանակութիւն ընէինք մեր մէջ քեզի համար . անշուշտ սա կէտն ալ չէք կրնար ուրանալ որ ամբողջ օժանդակ խմբի անդամները անհատապէս ալ որչափ օգնած են քեզ . ասիկայ արեւի պէս կը փայլի . հասցա ի՞նչ ընէինք . մարդ մը պահելու համար խումբ մը կազմած ըլլայինք . ոչ մենք հանրութեան շահուն համար նոյնիկ եզրայնին կատենք սակայն հանդէպ քեզի բոլոր ընկերական պարտականութիւնները կատարեցինք . բայց դուն անամօթաբար անդամներէն հաւաքած բաժնեգրներդ կսկորդեցիր րու փոխարէնը մենք վճարեցինք շուր մարդով . ատենապետին ստորագրութիւնը կեղծեցիր , և արքեպիսկոպոստին մէջ խումբ մալմութեան մը ներկայութեանը խորխորտարար պառակտեցիր թէ օժանդակ խմբի գործակատարն ես և ասանցով չը բաւականաւոր ինչպէս ըսած էք , դուք նամակաւ գաշնակցականաց հետ բանակցելու գացիր , թէ օժանդակ խմբի և թէ դաշ . վրաստանութիւնը շարաշար գործածեցիր , ըսելով թէ նամակին պարունակութեան կարեւորութիւն չըտալով ամբողջը գծեցին , խորհելով թէ մի գուցէ ապրելու գիրքդ խախտես . և այս բոլորը զօրաւոր ապացոյցներով քու վրայ հաստատուելէ վերջը ընդժողովին միաձայն հաստատութեամբ արտաքսութեան վկայ են Պ . Ս . Յ . Ս . Մ . Կ . որ այսօր երեքն ալ վառնայ են . ու այսօր ելեր կը պօռաս թէ հայուն ցաւերուն գիտակից փափաքեցար խումբը Գաշնակցեցնել . թէ եւ հիմա ինքզինքդ դաշ . համակրող մը ցոյց տալ ուզերես սակայն դաշ . պէտք չունի քեզ նման բազմախնդիրներու : Միութեան մէջ Ալիսի որդեգիր ստորագրութիւնով յօդուածներդ կը վկայեն որ չնչ . և Գաշնակցի անխորհրդեղանքը հարուստ ձած են , ըսյց գիտցիր որ որչափ ծպտեալ հրապարակելու գարձեալ մենք կը հասկնանք թէ մեր Ն . Բ . ես . յետոյ 25 սկիի բացատրութիւնը տամ :

Բոլոր ընկերները գիտեն որ 18 Գալ . ոսկի է . բայց այդ ստակն ալ քաղաքիս չնչ . մասնաճիւղին յանձնուեցաւ . դարձեալ ես հակառակ էի որով ձայնս անլսելի մնաց . 30 ձայնի գէժ երեք հոգի միայն ձայններն չի տուինք ու այդ բանին համար Պ . գանձապահը որ ամենամտերիմ բարեկամն էր , հետս կուտելէ վերջ ,

ամիս մըն ալ խոռով մնացինք ու ուրիշներ հաշտեցուցին մեզ . որք են Ա . Թ . Մ . Ե . Մ . այսօր անոնք ալ վառնայ են :

Թ . Փ .

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Վաղածանօթ բարեկամի յուզարկաւորութեանը առթիւ կրթարանի սաները եկեղեցի տարած ըլլալով . Տէր Սարգիս հօր ձեռք ինձ ազարարութեամբ թէ « թողական խորհրդոյ կողմանէ հրամայուած է որ . ո ե . է վարժարանէ մը դազողին մօտ սղակիր աշակերտներ չի գտնուին . թէ այս մասին ինքք պատասխանատու չէ , եւ կամ պէտք է թողական խորհուրդէն երկառող մը բերեմ » :

Եւ որով հետեւ որոնք որոշման բռնորովին անտեղեկ լինելով աշակերտներս տարած էի , գացի այս մասին քարոզիչ հայր սուրբին միջամտութիւնը խնդրեցի , նորին Գերագաւուրութիւնը պատասխանեց թէ « ասանոք իրբեւ յուզարկաւոր եւ կած են , կրնան կենալ ու խնդրը փակուեցաւ » :

Արդ որովհետեւ եկեղեցոյ մէջ այսպիսի ազդարարութիւն մը ստալին անգամ ըլլալով ինձ կը պատահի կերպի թէ քիչ մը յուզուած ու վըշտացած ըլլալով խնդրեց իմ կողմանէ փոքր ինչ տարբեր բացատրուած է եւ խոզներն ալ տարբեր կերպիւ ըմբռնած են ու այսպէս հրապարակային հարցի մը պատճառ դարձաւ :

Պ . ՃԻՅԵՐՃԵԱՆ  
Վառնա , 20 Մարտ

Ն . Ա . Մ . Ա . Կ . Ս . Ո . Փ .

Վանա գաւառի Կարճկանի Օդոնց գիւղացի Մարտիրոս Տէր Մանուէլեան 26 տարեկան երիտասարդ , երեք տարի է ի վեր է ուր գտնուելը յայտնի չէ . երեք տարի առաջ Բուժանիոյ Եաշ քաղաքը երկրաշարժի մը գրագիրն եղած է եղեր , ուստի որոնք որ գիտեն և կը ճանչնան զինքը հաճին իր հասցէն ուր եւ ինչ գործով զբաղելը իմացնեն խմբագրութեանս :

Մուրատ-Սոկրատ , ձեր նամակը տեղի անձկութեան պատճառաւ հետեւալ համարին թողուցինք :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գարատաղի և Սերպիոյ յարաբերութիւնները լարուած են . Սերպիոյ ներկայացուցիչը Նիքօլա ի իշխանին յանձնած է իր յետոյ կողման թղթերը որ և վերջնականապէս խղճման նշանակութիւնը ունի :

Չուրիցերիոյ Գաշնակցական կառավարութիւնը մերժած է Սերպիոյ առաջարկութիւնը գլխաւոր հիւպատոսութիւն մը հաստատել ժընէվի մէջ , այն պատճառաւ որ Սերպիոյ նախարարապետը ազգային ժողովին յայտարարած էր թէ այդ հիւպատոսութիւնը պիտի հաստատուի ժընէվ , սերպ գաղութը քաղաքական տեսակէտով հսկելու համար :

Տամատ Մահմուտ փաշայի երկու զաւակները ժընէվ մեկնելէ առաջ Սուլթանին նամակ մը զըրկած են որով կը պարզեն թուրք վարչութեան կործանարար վիճակը Թուրքիոյ համար :

Մարտ 15ին կը հեռագրեն թէ ժէնէվալ ժուպէր մեռած է ստամբուլի հիւանդութեանէ Պրէտորեան խոր սուզի մէջ է : Մարտ 16ին մեծ շքով կատարուէր է հաշակաւոր պօէր մէնէրային թաղումը , ժողովրդեան ամեն գաւը մասնակցած է թագման հանգէսին , օտար պետութեանց զինուորական կցորդները և զերուած անգլիացի սպաները ժուպէրի գագազին վրայ թարմ ծաղիկներ դրած են :

Նախագահ Քրիկէր յուզուած դամբանական մը արտասանած է հայրենասէր քաջ և կորովի զօրավարին վրայ և ժէնէվալ Պօսա գլխաւոր զօրավար հոշակած :

Անգլիական զլիւար հրամանատար Բայբրաս ցաւակցական հեռագիր զընթացէ ժուպէրի մահուան առթիւ : Պօէր փոքրիկ , քաջ սուպետական և ամեն համակրութեան արժանի ժողովուրդը իր ճգնաժամի վայրկեաններուն մէջ զրկուեցաւ իր ամենակարեւոր երկու զօրավարներէն : ժուպէր մեռաւ իսկ Քրօնէ գերի ինկաւ Անգլիացիներու ձեռքը : Կարծես նախախնամութիւնը և բախտն անգամ երկու կը դառնունեն փոքրիկ աղջերէն :

Պօլսէն ամսոյս 16ին կը հեռագրեն թէ Օրմանեան կը պնդէ իր հրաժարականին վրայ . Սոսյ կաթողիկոսական ընտրութիւնը յետաձգուած է մինչեւ ապրիլի 5ին . Օրմանեան կը պահանջէ որ զինուորական տուրքը ներուի և հայերը ազատ երթնուեն :

Մարտ 14ին Վարինթօնի մօտ ամբողջ օրը կոիւ մը տեղի ունեցեր է անգլիացիներու և պօէրներու միջեւ :

Մարտ 11ին կը հեռագրեն թէ Իբէքի մէջ անապահոյութեան պատճառաւ քանի օրէ ի վեր շուկան գոցուած է : Խղուած է նոյնպէս Իբէքի և Միտրօվիցայի հազորակցութիւնը :

Վիէննա սարսափելի ձիւն կը տեղայ . Վիէննայի հազորակցութիւնը զանազան երկաթուղիի գծերու հետ իրզուած է : Շատ դժբախտութիւններ պատահած են :

ԹԱՏՐՈՆ «ՍԱՆԹՐԱԼ»

Վաղը , Մարտ 23 հինգշաբթի զիշեր թատրոն «Սանդրալի» մէջ ինպատ թատրոնի հին աշխատարաններէն Տ . Գալէմէանի և զերասան Ե . Երասեանի ներկայացում մը պիտի արուի Վէտէլօ հայ դերասանական խմբին կողմանէ , առաջին անգամ ըլլալով Տ . Մ . Մնակեանի թարգմանութիւններէն «Սիլվան Իմպէր» առնու թատերախաղին ներկայացումը և նոյնպէս առաջին անգամ ըլլալով «Խաբեբայ ծառան» ծիծաղաշարժ զաւելչոր , միջնադարներուն տիկին և պարոն Վրա-

տիմիւրօֆ տուէթթօներ և պարեր պիտի խաղան :

Սոյն ներկայացման փայլը աւելի պիտի զարգարէ Տ . Գամբր Արշաիրի յօրինած ՈՐԻՂ անուն մենախօսութիւնը զոր Տկ . Քնար Սվաճեան պիտի արտասանէ :

Յուսալի է որ թատերասէր հասարակութիւնը չը պիտի զլանայ իր քաջաբերութեամբ պատուել սոյն նպատար :

Հոշակաւոր բարձրատայեալ Տիար Տիգրան Չուհաճեանի հեղինակած «Լէպլէպլիճի Հօրօր» անուն օրէրէթը խմբին կողմանէ փորձի տրուած է և որուն ներկայացման համար ամէն ջանք և զոհողութիւն չէ խնայուած :

Մ Ա Ն Կ Ա Պ Ա Ր Տ Է Չ ՏԻԿԻՆ Ե . ՉՕՐԵԱՆԻ (ՖԻԼԻՊԷ)

Կընդունուին 4-7 տարեկան մանուկներ , դասերը առաւօտեան 9-12 եւ կէս օրէն վերջ 2-5 :

Հետեւ բնակող մանուկները ճաշերին կրնան մանկապարտէզին մէջ ընել և մինչև գասերուն սկսուելը մասնաւոր հսկողութեան տակ խաղալ :

Վճարը՝ ամսական ութ լէվ :

«ՇԱԻՒՂ»

Շախիգ ձեռքէ չի ծախուիր , Բաժնեկիւնն է Պոլիարիոյ համար 10 Ֆրանք , արտասահմանի համար 12 Ֆրանք :

Հասցէն՝  
Rédaction de la revue «Chavigh»  
pensionat Arménien  
Varna

Յ . ՃԱՆԿԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒՄՆ՝  
ԾԽԱՎԱՃԱՌԱՆՈՑ  
Թիւ 389 Իսկիզի-պուշի

Կը վաճառուի ծրարատա , բոսթայի և աղբորագրի ամէն տեսակ բուլբուր նաեւ զանազան տեսակ սիկարներ , 94 Թուականին հրապարակելով Պուլիարիոյ գահաժառանգ Պօրիսի պատկերազարդ քառթ-փօթալներ , որ այժմ չեն գործածուել : Նոյնպէս եւ կը վաճառուի «Շարժում» :

Շարժումը կը ծախուի նաեւ նամակատան զիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը :

Նաեւ Շարժումը կը ծախուի Ա . Չարբանէլեանի գրատունը եւ խմբագրութեանս մէջ :

ԽՄԱՎԳՐՈՒԹՅՈՒՆ . «ՆԱՐԺՈՒՄ»

Կը ապագրուին ամէն լեզուէ այցեատման , հասցեատման , նամակազուխ , հարսանեկան հրատարակիչ , մահազգ :

Գիտելու յոյժ գիւրամուտչելի . Աւրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՉՆՈՐԱՐՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ  
ՍԵՉՅԵՄԻԱ «ՅԵՐԱՄՈՒՅԷՒՄ» ՎԱՐՍՈՎ